

Այսօր հանդիսանալիս ձայն ա-
ւետման հրեշտակին, թէ՛ այսօր
ձեզ ծնաւ փրկիչ որ է՝ օծեալ
միածին. փրկեալ է զմեզ տէր
փառաց որդի՝ սո՛ւրբ անունմբ
քոյնն:

Արդ ցընծայեալ բերկրեացուք
առ քեզ հոգի նբ անմահ. զի այ
սօր հակից քո բան՝ կոչի յիսուս
և փրկիչ. փրկեալ է զմեզ
տէր փառաց անունմբ փրկիչն
յիսուսի:

Այլ սո՛ւրբ արմատ փրկիչութեան
խսկո՛ւհի կոյս՝ մարմամ, ՚ի քեզ
ևս այսօր եղև բան, որ է՝ վեր
քան զամենայն, կոչիլ քեզ ծը-
նող փրկիչութեան անունմբ յի-
սուսադրո՛ւթեալն:

Ար ՚ի նախնունմն ընտրեցեր զյե-
սուս փրկիչ յակոբայ. իսկ այսօր
զորդիդ միածին ջնորհես փրկիչ
աշխարհի. օրհնե՛մք ըզհայրըդ

գըլթած անունմբ որդւոյ քոյ
յիսուսի:

Ինչըրպե՞ք անուն յիսուս
յիսուս տէր փրկիչ. որոյդ հսկ
յանէտ կըրկնի ծո՛ւնը յայնց ո՞րք
յերկինս և յերկրի. կըրկնե՛մք
և մեք ծո՛ւնը հոգւով անունն քոյ
և քեզ յանէտ:

Արդ աղաչեմք նբ զհոգիդ, որ
գըլթութեանց ես աղբււր. զի
ի սիրտ մեր և ՚ի հոգի դիցես
զանունն յիսուսի. որով մե՛ք
յանէտ կարիցեմք ասել նոր զյի-
սուս փրկիչ:

Արա՛ն լեր սուրբ մարմամ մայր
և ծընող յիսուսի. զի թէպէտ
այսօր չըմէցաւ սիրտ քո գը-
լթած և բարի. սակայն յո՛յժ
հըրճուեալ ցընծայար կոչմամբ
որդւոյն քո յիսուս:

Տաղարանին տպակից, Շարականներ, յօրինուած
Մխիթար Աբբաօր կողմէ (Գիրք Քրիստո-
նէականի վարդապետութեան, տպ. վեցետիկ
1771ին, երրորդ տպագրութիւն, էջ 170-171):

ՀԱՐՅԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՐԱՍՏԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ

Փոքր Ասիոյ կեդրոնական քաղաքներէն մէկն է Սեբաստիա, ուր
ասկէ 300 տարի առաջ ծնաւ Մեծն Մխիթար եւ կոչուեցաւ Սեբաս-
տացի:

Այս քաղաքին մասին գրելով Մատթէոս Ուռհայեցի մեր պատ-
միչը, զայն կը կոչէ «բաղմամբոյս եւ նշանաւոր քաղաք»¹:

Այս նշանաւոր քաղաքին կ'աւանդուեն մեր հին պատմագիրներէն
Հատեր ալ. այսպէս՝ Թովմա Արծրունի, Սմբատ Սպարապետ, Արիս-
տակէս Լաստիվերտցի, Սամուէլ Անեցի, Ասողիկ եւ Վարդան, եւ
հոսկ՝ Յովհաննէս Սեբաստացին, որ եկեղեցական Առաջնորդն է ե-
ղած քաղաքին, 1809-1829 տարիներուն:

Սեբաստիոյ մասին գրած են նաեւ, 1800ական թուականներուն,
հայ եւ օտար ուղեգիրներ. անոր պատմական փառապանծ անցեալի
մասին լոյս տեսած են զանազան հատորներ, որոնցմէ վերջինը՝
1974ին, «Պատմագիրք-Յուշամատենան Սեբաստիոյ եւ գաւառի հայու-
թեան» խորագրով, որու հեղինակն է Առաքել Ն. Պատրիկ:

Ներկայ յօդուածով, բնականաբար, մենք չենք ուղեր կրկնել զա-
նոնք, եւ ոչ ալ Սեբաստիոյ ընդարձակ պատմութիւնը շարադրել.
այլ նպատակ ունինք լուսարանել պատմական կարեւորութիւն ունե-
ցող քանի մը մուծ ու տարակուսելի կէտեր, որոնք հետեւեալներն են.

1. Հայաստանէն դուրս գտնուող հեռաւոր քաղաք մը՝ Սեբաս-
տիա, ի՞նչպէս բաղմամբորդ ու հայաբնակ դարձեր է, դարերու ըն-
թացքին:

2. Սենեքերիմ Արծրունի Վասպուրականի թաղաւորը, 1021ին,
ինչո՞ւ նախընտրեց երթալ Սեբաստիա, եւ ոչ թէ ուրիշ քաղաք մը,
եւ ի՞նչ հանգամանքով:

1. ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Պատմութիւն, Երուսաղէմ 1869, էջ 159:

3. Սենեքերիմ Ի՞նչ դրդապատճառով թողուց իր հայրենի երկիրը եւ դնաց Սեբաստիա. իր ազատ որոշումով, թէ բռնի՝ Բիւզանդիոնի Վասիլ Բ. կայսեր ստիպման տակ:

4. Ի՞նչ վերջ ունեցան Սեբաստիոյ հայ թաղաւորութիւնը եւ անոր շուրջը բնակող հայ իշխանները:

5. Ի՞նչ տեսակ քաղաք էր Սեբաստիա, պարսպապատ՝ թէ անպարիսպ. եթէ պարսպապատ էր, որմէ՞ եւ ո՞ր թուականին պարբսպապատուեցաւ:

6. Որո՞նք էին Սեբաստիոյ բերդերը:

* * *

1. Հայաստանէն դուրս գտնուող հեռաւոր քաղաք մը՝ Սեբաստիա Ի՞նչպէս քաղմամարդ եւ հայաբնակ դարձեր է դարերու ընթացքին:

Սեբաստիա շատ հին ժամանակներէ ի վեր Փոքր Ասիոյ նշանաւոր եւ պատմական քաղաքներէն մէկն եղած է, Ալիս գետի ափին: Անոր հիմնադրութեան թուականը անորոշ կը մնայ: Անկէ եկեր ու անցեր են շատ մը ժողովուրդներ. Հիթիթներ, Փռիւզացիներ, Արմէններ, Յոյներ եւ Հռոմէացիներ. հոսկ՝ մաս կազմած է Պոնտական հռոմէական եւ բիւզանդական կայսրութիւններուն:

Արմէնները Ք. Ա. 2000ին, անցնելով Վոսփորի նեղուցէն, կանդաւորին Ալիս գետի հովիտին մէջ, եւ հոն մնացին հաւանօրէն մինչեւ 650 թուականը, մինչեւ իրենց մուտքը Ուրարտու: Այդ շրջանէն անշուշտ Սեբաստիա սկսաւ հայաբնակ դառնալ: Արմէններու Ուրարտու մուտքէն վերջ ալ, հաւանաբար հոն մնաց եւ շարունակեց ապրիլ հայկական մեծ դաղութ մը, ինչպէս ցոյց կու տան յաջորդ դարերու զէպքերը. այնպէս որ այդ շրջանը «Փոքր Հայք» կոչուած է պատմիչներէն: Խորենացին թէեւ այս բառը չի գործածեր, սակայն երբ Արամ Նահապետի մասին կը խօսի, այդ հոգամասը «Արեւմտեան կողմն» կը կոչէ, եւ մաս կը համարի «Մեծ Հայքի»:

Տաշեան կը գրէ այս մասին. «Սեբաստիա հին Հայաստանի անմիջական սահմանակից չէր. կար միջանկեալ Փոքր Հայք մը, որուն հետ ձուլուեցաւ յետոյ վարչապէս. մեր պատմագրաց համար Փոքր Հայք գոյութիւն չունի գրեթէ, այս որոշ գաղափարով որ՝ Եփրատէն արեւմուտք Հայաստան գոյութիւն չունի»: Եւ կը ջանայ մեր պատմագիրներէն ապացուցնել «Փոքր Հայք» անուան չգոյութիւնը²:

2. ՏԱՇԵԱՆ Հ. ՅԱԿՈԲՈՍ, Հիմ Հայաստանի արեւմտեան սահմանը - Փոքր Հայք եւ Կողքիք (Սեբաստիա), Վիեննա 1948, էջ 2-3 (Ազգ. Մատ. ՃՄՁ):

Աւելի ուշ, այս շրջանը «Առաջին Հայք» ալ կոչուած է: Խորենացին, երբ դարձեալ կը խօսի Արամ Նահապետի մասին, կը գրէ թէ Արամ «Հասանէ ի կողմանս Կապադովկիացոց, տեղի մի որ այժմ կոչի Կեսարիա... եւ թողեալ զոմն Մշակ անուն՝ յազգէ իւրմէ, եւ բիւր մի ի զօրաց իւրոց ի վերայ աշխարհին, եւ ինքն դառնայ ի Հայս: Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս եւ զլեզուս հայկական. վասն որոյ մինչեւ ցայսօր ժամանակի անուանեն զիդիմայն զայն Պոնտին Արմենիան, որ թարգմանի «Առաջին Հայք»³:

Քսենեփոն յոյն պատմիչը (Ք. Ա. 522-486), իր բիւր զօրքերու նահանջին մէջ կը յիշատակէ արեւմտեան Հայաստանի սատրապը՝ Տրիբազ:

Մեծ եւ Փոքր Հայք բաժանումը պատմագիրներէն կատարուած կը համարուի 223-187 թուականներուն Ք. Ա.:

Անտիոքոս, 223ին Ք. Ա., Հայաստանի երկու մասերուն ալ նախարար եւ կառավարիչ կը կարգէ. Արտաշէս՝ արեւելեան կողմին, եւ Զարեհ՝ արեւմտեան կողմին. եւ որովհետեւ Արտաշէսի մասը մեծ էր, կոչուեցաւ Մեծ Հայք, իսկ Զարեհինը՝ Փոքր Հայք:

Մեր կարծիքով՝ շատ հին ժամանակներէ ի վեր Փոքր Հայքը Հայաստանի մաս կը կազմէր, եւ բնակուած էր մեծ մասով Հայքի. այս Փոքր Հայքի մեծագոյն քաղաքը կամ մայրաքաղաքն էր ՍԵՐԱՍՏԻԱ:

Սեբաստիոյ Հայքը իրենց յատուկ բարբառը ունէին. սահմանակից ըլլալով Մեծ Հայքի, յարաբերութեան մէջ էին իրենց ազգակիցներուն հետ. բայց անշուշտ անոնցմէ շատեր վարժեցան նաեւ կիցներուն հետ. բայց անշուշտ անոնցմէ շատեր վարժեցան նաեւ տեղական յոյն լեզուին: Անոնք ունէին հարկաւ հայերէն դպրութիւն, ու թերեւս յունարէն կամ ասորերէն տառերով իրենց փոքրիկներուն կը սորվեցնէին հայերէն գրել. այս իմաստով է թերեւս Խորենացիի կը սորվիչեալ ակնարկը՝ հայախօս ու հայալեզու այդ դաղութին մասին⁴:

Ըստ հնագէտ պատմաբաններու, Փոքր Հայքի Եփրատէն աւելի կամ նուազ հեռու գաւառները՝ Կապադովկիոյ հետ միայնդամայն՝ հայ էին մեծ մասով⁵:

Եւստրատիոսեանց պատմութեան մէջ կը կարդանք՝ թէ Սեբաստիոյ Ս. Վլաս Եպիսկոպոսը հայերէն կը խօսէր Ս. Եւստրատիոսի հետ, յոյն կամ հռոմէացի դահիճէն ծածկելու համար իրենց խօսակցութեան նիւթը:

3. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, Գ. տիպ, Վենետիկ - Ս. Ղազար 1955, էջ 74-76:

4. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Ոջ. գ.:

5. Հմատ. ԱՂԱՔԱՆԴՐԻԱՆ ԱՆՈՐ. Վ. Պատմութիւն ակամաւոր քաղաքին Սեբաստիոյ, Վենետիկ - Ս. Ղազար 1911, էջ 18-19:

Մեկտին էի Ակակ եպիսկոպոսը կը ջանար Հայոց լեզուին դիր յարմարեցնել, եւ նոյն դործին յաջողութեան համար կ'աշխատակցէր Մեսրոպ Մաշտոցի⁶:

Ազգաթանգեղոս կը պատմէ՝ թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կեսա-րիոյ Ղեւոնդ հայրապետէն ձեռնադրուելէն յետոյ, կու գայ Սեբաստիա, ուր զինքը կը դիմաւորեն եպիսկոպոսներ, սարկաւաղներ, իշխաններ եւ բազմաթիւ աշխարհականներ. Գրիգոր անկից առնելով մարդիկ՝ կը տանի Հայաստան, Հայոց քարոզութիւն ընելու. «զի վիճակացուցէ ի քահանայութիւն յիւրում աշխարհի»⁷: Արդ, եթէ անոնք հայերէն չգիտնային, ինչպէս կրնար տանիլ Սեբաստիայէն՝ եպիսկոպոս եւ քահանայ կարգելու իր վիճակին:

Այս քանի մը վկայութիւնները բաւական են՝ հաստատելու թէ հին ժամանակ Առաջին եւ Երկրորդ Հայքի բնակիչներու մեծագոյն մասը Հայեր էին. անոնք նոյն իսկ իրենց առանձին եպիսկոպոսներն ալ ունէին, նոյն ազգէն, ինչպէս յայտնի է Սեբաստիոյ առաջին եպիսկոպոսի անունէն, որ Մեքրուժան է⁸:

387 թուին, Բիւզանդիոնի քաղաքական եւ կրօնական իշխանութիւնները ամէն կերպով կը ձգտէին իրենց ենթարկել այդ մարդերու հայութիւնը, ապաղլայնացնել. սակայն, ինչպէս կը գրէ Պրոկոպիոս յոյն պատմիչը, «Անոնք իրենց գաւառներում մէջ կը պահէին իրենց ազգային իրաւունքները, եւ իրենց տոհմերը կ'առաջնորդէին, եւ կայսերական բանակին չէին խառնուեր, մինչեւ Յուստինիանոս Ա. ի ժամանակ»⁹:

Հայաստանի անմիջական մօտակայ շրջաններուն մէջ, Հայերու այսքան մեծ թիւ մը ունենալը երբեք պէտք չէ զարմանալի թուի, երբ արդէն Բիւզանդական պետութեան մէջ՝ Հայերը կէսէն աւելին կը կազմէին: Եւ ինչպէս պատմութիւնը կը հաստատէ, Հայերը դժբախտ պարագաներու բերմամբ, միշտ կը շարունակէին դաւլթել յունական երկիրները, ինքնաբերաբար, կամ Բիւզանդական պետութեան քաջալերութեամբ, մասնաւորապէս փոխան իրենց զինուորական արժանիքներուն՝ որոնք միշտ գովուած են՝ հողեր եւ իշխանութիւններ ստանալով: Այն սոսկալի եւ երկարատեւ պատերազմներուն ատեն, որ Ժ. դարուն վարեցին Նիկիոյ Փոկաս (963-969) եւ իր յաջորդը՝ Չմշկիկ (969-976) կայսրները, Կիլիկիոյ եւ Ասորիքի մէջ, անոնք սուրէ անցողին, գերեցին եւ աքսորեցին մահմետական բնա-

6. Հմմտ. ԱՂԵՔԱՆԻՐԵԱՆ Ա. Վ. Թ. Գ. էջ 20:

7. ԱԳԱՔԱՆԻՐԵԱՆ, Պատմութիւն, Գ. տիպ, Վենետիկ - Ս. Ղազար 1930, էջ 598:

8. Հմմտ. ԱՂԵՔԱՆԻՐԵԱՆ Ա. Վ. Թ. Գ. էջ 20:

9. ՉԱՄՉԵԱՆ Հ. ՄԻՔԱՅԷԼ, Պատմութիւն Հայոց, հտ. Բ, Վենետիկ - Ս. Ղազար 1785, էջ 155, եւ ԱՌԱՔԵԼ Ն. ՊԱՏՐԻԿ, Պատմագիրք-Յուշմատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, հտ. Ա, Պէրուք 1074, էջ 26-27, ընդգծումը մերն է:

կիչները, Հայերուն տուին անոնց հողերը, որովհետեւ Հայերը այդ կուրծներուն մէջ ուշագրաւ դեր կատարեցին:

Այսպէս կը յիշուի թէ 962ին, երբ Յովհաննէս Չմշկիկ (տակաւին արեւելեան բանակին հրամանատար) կ'երեւի Հայոց արեւելեան սահմաններուն վրայ, եւ մերձակայ արաբ երկիրները կը նուաճէ, շատ Հայեր բիւզանդական կայսրութեան երկիրները կ'ապաստանին: Անոնց կը տրուի Սեբաստիոյ նահանգը, եւ Արաբներէն նոր առնուած Եփրատացւոց շրջակայքը՝ գտնուող ամրոցները, ինչպէս՝ Մամբիճ, Տըլուք, (Այնթապի մօտ) եւ այլն:

Այս Ժ. դարու անցքերու մասին կը գրէ Միքայէլ Ասորի եւս, եւ կը հաստատէ այս իրողութիւնը, ըսելով՝ թէ «Այդ դարուն, երբ Յոյները կը գրաւէին Արաբներէն Կապադովկիոյ, Հայաստանի (իմա՝ Փոքր Հայք) եւ Սուրիոյ մէջ քաղաքներ, հոն կը քշէին ու կը բերէին Մեծ Հայաստանէն բազմութիւն մը: Անոնք կը հաստատուէին այդ տեղերը եւ կ'աճէին», եւ ինչպէս տեսնուեցաւ, նոյնիսկ կը ստանալին հողային ինչքեր:

Իսկ ԺԱ. դարուն, երբ ասպարէզ կու դան թուրք ասպատակները, եւ Հայաստանի արեւելեան կողմերը կը հասնին, Հայերը դարձեալ կ'ապաստանին յոյն կայսրութեան երկիրները, ուր կը դադրեն այս անգամ զանգուածային կերպով:

Սենեքերիմ Արծրունեաց թագաւորը՝ այս արշաւանքներէն տագնապած եւ խուճապի մատնուած, եւ հրապուրուած ու սարսափած Վասիլ կայսեր զօրութենէն, կ'որոշէ իր երկիրը Յոյներուն ընծայել եւ իր Ժողովուրդին հետ գաղթել յունական երկիրները:

Իր Դաւիթ որդին Պոլիս կը զրկէ, կայսեր ներկայացնելու իր այս առաջարկը. Վասիլ Բ. սիրով կ'ընդունի, եւ հաւանօրէն իր մտադրութիւններուն համաձայն կը գտնէ զայն:

Օտար պատմագիրներէն Միքայէլ Ասորին կը պատմէ՝ թէ «1300ից (= 990) սկսաւ Հայոց գաղթը մեծ Հայքէն եւ ամէնէն առաջ Կապադովկիոյ շրջանէն: Եւ Վասիլ կայսրն է որ Հայոց ձեռքէն առաւ Սեմեթիւմ քաղաքին երկիրները, եւ ատուն փոխարէն՝ տուաւ Կապադովկիոյ Սեբաստիան: Հայերը բազմացան այս կողմերը եւ անկից է որ տարածուեցան բոլոր Կապադովկիա, Կիլիկիա, եւ Ասորիք»¹⁰:

10. Տե՛ս Միքայէլ Ասորի պատմիչին բնագիրը, MICHEL LE SYRIEN, Chronique, trad. par J. B. Chabot, tome III, fasc. II, Paris 1906, էջ 133, ընդգծումը մերն է: Մ. Ասորիի այս գործին հայերէն թարգմանութեան մէջ, որ համառոտութիւն մըն է, անկասկած, այս հատուածը զեղչուած է, սակայն կան նման արտայայտութիւններ. հմմտ. օրինակի համար, ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻ, Ժամանակագրութիւն, Բ. տիպ, Երուսաղէմ 1871, էջ 411. տես նաեւ ԱՂՊՈՅԱՃԵԱՆ Ա, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հտ. Ա, Գահրէ 1937, էջ 338: Դար-

Այս տեղափոխութեան յիշատակութիւնները կ'ընեն նաեւ մեր պատմագիրները. անոնք ընդհանուր համաձայնութեամբ կը հաստատեն թէ Սենեքերիմ ստացած է «Զֆադաֆն Սեբաստիա եւ որ շուրջ գնովաւ գաւառք»¹¹:

Սեբաստիա՝ որ կը տրուէր Սենեքերիմի, արդէն կիսահայ բնակչութիւն մը ունէր. այս դադարակնութեամբ՝ անկէկա կը դառնար բոլորովին հայ քաղաք մը: Յոյներու նենդութեամբ՝ երբ Բագրատունեաց թագաւորութիւնը եւ հայկական միւս իշխանութիւնները հետզհետէ անջըացան եւ ջնջուեցան, Հայերու դէպի Կապադովկիա խուժումը կամայ կամ ակամայ աւելի մեծ համեմատութիւն առաւ: Գիտենք պատմութենէն՝ թէ Յովհաննէս Սմբատ դառնացած Վասիլ Բ.էն, որ իր դէմ հանած էր իր Աշոտ եղբայրը – անշուշտ հայ թագաւորութիւնը տկարացնելու դիտումով – պարտաւորուեցաւ հուսկ՝ Բիւզանդիոնի դերձխանութեան ենթարկուիլ եւ յանձն առնել իր մայրաքաղաքը՝ Անին կտակել Յոյներուն (1022):

Ազգը՝ որուն հաւանութիւնը չէր առնուած այս անխորհուրդ եւ ազգադաւ կտակը կատարուած ատեն, Յովհաննէս Սմբատի մահէն յետոյ ընդդիմացաւ Անին յանձնելու¹²:

Սեբաստիա այսպէս հայաբնակ կարեւոր քաղաք մը դարձած էր, եւ պատահական բան մը չէ որ Սենեքերիմ Արծրունի թագաւորը, 1021ին, կայսեր առաջարկին եւ ստիպումին վրայ, նախընտրէր Սեբաստիան, փոխարէն տալով անոր իր փառաւոր Վասպուրականը, Վանն ու Ոստանը, Աղթամարն ու Վարազը. եւ 40.000 ժողովուրդով, իշխաններով, զինուորական բաւական մեծ ոյժով մը, եպիսկոպոսներով եւ քահանաներով ճամբայ ելլէր դէպի Սեբաստիա, ձգեւով կայսեր, ըստ մեր պատմագիրներուն, 8 քաղաք, 400 զիւղ, 72 բերդ եւ 115 վանք¹³:

Ի՞նչ կը ստանար Սենեքերիմ ասոնց փոխարէն:

Դարձեալ ըստ մեր պատմագիրներուն, ան կը ստանար Սեբաս-

ձեալ Հայ ժողովրդի պատմութիւն, խմբ. ԱՂԱՅԵԱՆ Ե. Պ., ԱՌԱՔԵԼԵԱՆ Բ. Ն., ԳԱԼՈՅԵԱՆ Գ. Ա. եւայլն, հտ. Գ, Երեւան 1976, էջ 141-144 եւ 673-674:

11. Հմմտ. օր. համար ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴ. ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ, Պատմութիւն, Բ. տիպ, Վենետիկ – Ս. Ղազար 1901, էջ 22, ընդգծումը մեզմէ:

12. Հմմտ. ԱԼՊՈՑԱՅԵԱՆ ԱՐՇԱԿ, Պատմ. Հայ Կեսարիոյ, էջ 339:

13. Հմմտ. ՍԱՄՈՒԷԼ ՔԶՆԵ. ԱՆԵՑԻ, Հաւաքումնաբ. ի գրոց պատմագրաց, հրատ. Ա. Տէր-Միքայէլեանի, Վաղարշապատ 1893, էջ 104: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տառնագիրք, հրատ. Հ. Ս. Ազրլեան, Վենետիկ – Ս. Ղազար 1956, էջ 23-24: Ազգային պատմիչներու քով կը նշմարուի թիւերու որոշ փոփոխութիւններ. տե՛ս ՕՐՄԱՆԵԱՆ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. Ազգապատմութիւն, հրատ. Ա. Կոստանդինուպոլիս 1912, թիւ 824, սիւնակ 1197-1198: Հմմտ. նաեւ ԼԵՕ, Հայոց Պատմութիւն, հրատ. Բ, Երեւան 1907, էջ 633-635:

տիւան՝ իր մերձակայ երկու քաղաքներով, Լարիսա եւ Աւարա կամ Ամարա: Ինչ որ կ'երեւի պատմագիրներու գրածներէն, Սենեքերիմի ստացած հողերու սահմանները Ալիսէն մինչեւ Եփրատ դետը կը հասնէին, բաւական ընդարձակ տարածութիւն մը, որու գաւառներուն մէջ Սենեքերիմ կը տեղաւորէ իր եղբորորդիները՝ Դերենիկը եւ Աշոտը. անոնք Եփրատի մօտիկ հիմերը կը դնեն նոր քաղաքներու եւ դիւղերու, կը շինեն Մարնտունիկ, Արարկիր, Աշոտի եւ նաեւ Ակն դիւղաւանները:

Վարդան՝ Սենեքերիմի ստացած քաղաքներու վրայ ուրիշ մ'ալ կ'աւելցնէ, Պաաստինս. այնպէս որ 1099ին, երբ խաչակիրները Փոքր Ասիոյ Հերակլէ (հիմար Երեկլի) քաղաքէն կ'անցնէին՝ Կեսարիոյ շրջանները երթալու, կը տեսնեն որ այդ շրջանի բնակչութեան մեծ մասը Հայեր էին. այս պատճառով անոնք այս երկիրը կը կոչեն Hermoniorum Terra – «Հայերու երկիր» անունով¹⁴:

Յրանսացի պատմաբան Լորան, խօսելով ԺԱ. դարու ընդհանուր կացութեան մասին, կ'ըսէ՝ թէ «Հայերը կը գրաւէին կայսրութեան արեւելեան մասերը. կը կազմէին բնակչութեան գրեթէ ամբողջութիւնը, Իբերիոյ (հիւսիսային Եփրատի հովիտը) եւ Միջագետքի (հարաւային Եփրատը) թեմքերուն, որոնք գուտ հայ երկիրներ էին: Բայց անոնք գրաւած էին նաեւ Տաւրոսը, Միլիտինէն, Սեբաստիոյ ու Կապադովկիան Կեսարիոյ շրջանները...»¹⁵:

Այսպիսի հայ բնակչութեան վրայ էր որ իշխեց Սենեքերիմ եւ իր յաջորդները շուրջ 51 տարիներ: Ապա Անիէն դադարած հայ իշխանները եւ Ռուբինեանները յաջողեցան այս հոծ հայութեան կըռքնելով, հիմնել՝ Տաւրոսի լեռներուն վրայ, 1080ին, Ռուբինեան հզօր իշխանութիւն մը, որ թագաւորութեան բարձրանալով՝ 300 տարի իշխեց Կիլիկիոյ եւ շրջակայ երկիրներուն վրայ, փառաւոր անուն մը թողլով հայ պատմութեան մէջ:

2. Սենեքերիմ Արծրունի Վասպուրականի թագաւորը, 1021ին, ինչո՞ւ նախընտրեց երթալ բնակիլ Սեբաստիա, եւ ոչ թէ ուրիշ քաղաք մը: Եւ ի՞նչ համապատասխանով:

Պատմական ընդհանուր ակնարկով մը տեսանք թէ ի՞նչպէս Հայերը, շատ հին ժամանակներէ ի վեր եկեր եւ հաստատուեցին Փոքր Հայքի Բիւզանդական հողերուն մէջ. ասոր վրայ ահա աւելցաւ պատ-

14. ԱՌ. Ն. ՊԱՏՐԻԿ, Եջ. Գ. էջ 58:

15. LAURENT J., Byzance et les Turcs Seldjoudides dans l'Asie occidentale jusqu'en 1081, Paris 1914, էջ 67. Հմմտ. ԱԼՊՈՑԱՅԵԱՆ Ա. Պատմութիւն հայ գաղթականութեան, հրատ. Ա. Գահրէ 1941, էջ 251-252, ընդգծումները մերն են:

մական այն մեծ գաղթը՝ 1021ին, որ կատարուեցաւ Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի թագաւորին գլխաւորութեամբ:

Մեր պատմիչները շատ ժլատ են Սենեքերիմի Սեբաստիա գաղթելուն եւ հոն տեղաւորուելուն մասին. օրինակի համար, չենք դիտեր թէ Սենեքերիմ ե՞րբ Սեբաստիա հասաւ, իր զինուորական կազմով եւ ժողովուրդով, տեղւոյն բնիկ հայութիւնը ի՞նչպէս ընդունեց զինքը, ի՞նչ վարուելակերպ ունեցան տեղւոյն յոյն բնակիչները. ի՞նչպէս եւ ո՞ւր տեղաւորուեցաւ 40-000է աւելի ժողովուրդ մը, ի՞նչ նոր շինութիւններ կատարեցին անոնք, ի՞նչ նոր դիւղեր եւ աւաններ հիմնեցին ու ծաղկեցուցին՝ զանազան շրջաններու մէջ: Կան պատմիչներ՝ որոնք 400-000 հազարի կը հասցնեն դաղթողներու թիւը, ինչ որ չափազանցուած կը թուի մեզի. ուրիշ պատմիչներ շուրջ 100-000 բաւական կը համարին: Բաւական մեծ թիւով ժողովուրդ պէտք է որ մնացած ըլլայ Վասպուրական, նոյնիսկ իշխաններ եւ Արծրունի տան ազգականներ, որոնք աւելի երկար դիմացան իրենց հայրենիքին մէջ՝ Սելճուք թուրքերու արշաւանքներուն, քան թէ Սեբաստիա գաղթող Սենեքերիմի յաջորդները¹⁶:

Սենեքերիմի գաղթի տարին եղած է, սովորական կարծիքով, 1021ը. բայց կան ըսողներ ալ որ եղած ըլլայ 1016ին, եւ նոյնիսկ 1018ին: Սակայն պատմագիրներէն ընդունուած թուականը 1021ն է:

Մեր պատմագիրները գրեթէ նոյն ձեւով կը ներկայացնեն Սենեքերիմի գաղթի պատմութիւնը, եւ քան մը չեն ըսեր թէ ինչո՞ւ համար Սենեքերիմ նախընտրեց երթալ բնակիլ Սեբաստիա, եւ ո՞չ թէ ուրիշ քաղաք մը: Անշուշտ բազմահազար հայութիւնը՝ դարերէ ի վեր հաստատուած էր Սեբաստիոյ շրջանին մէջ, տնտեսապէս լաւ, եկեղեցական կազմակերպութեամբ եւ իշխանական տուներով օժտուած, վստահութիւն ներշնչեցին Սենեքերիմի, իբրեւ ապահով տեղ մը՝ երթալ Սեբաստիա, թէեւ շրջակայ քաղաքներուն մէջ ալ Հայերը բազմաթիւ էին:

Մեր պատմագիրները իրարմէ առած են Սենեքերիմի գաղթին պատմութիւնը, Արծրունիէն սկսեալ մինչեւ վերջինս Յովհաննէս Սեբաստացի պատմիչը, որ նախորդներէն հաւաքելով կը գրէ. «Բարեպաշտաբայն Արծրունեաց՝ Յովհաննէս, որ եւ Սեմեքերիմ անուա-

նիւր, նեղեալ յոյժ ի սկիւքացի քաթաբացն, որք կոչին քուրք, վասն այն հաստատուն յետկարաւ ետ կայսերն վասլի գվասպուրական աշխարհն 4000 ընդարձակ եւ արդիւնարար գիւղօք, 72 բերդօք եւ 10 քաղաքօք. եւ ընկալաւ ի նմանէ հաստատուն նամակաւ գամեմայն հրկիրս Սեբաստիոյ՝ հանդերձ ամեմայն գաւառօք իւրովք, մինչեւ ի սահմանս Եփրատայ: Եւ առեալ գորդի իւր եւ զեղօրորդիս եւ զագգականս եւ գամեմայն ագատագունդ գօրսն եւ գոամիկս եւ գրեթէ գերբորդ մասն աշխարհին՝ իբր չորս հարիւր հազար ոգիս՝ հանդերձ ախիւք իւրեանց, եկն ի Սեբաստիա եւ բնակեցաւ աստ յամին տեառն 1021 (ՆՀ): Երբ ընդ իւր եւ գաւրք Նշանն տեառն զխաչն վարագայ եւ շինեաց վասն այնր գվանս սուրք Նշանին Սեբաստիոյ եւ եղ ի սմա զխաչն տէրունական»¹⁷:

Սենեքերիմի Սեբաստիա հասնելէն վերջ՝ մեր պատմիչները զինք տախաւին քագաւոր կը կոչեն, սակայն յոյն պատմիչները Պատրիկ կամ Զօրավար կը կոչէին Կապադովկիոյ, ինչ որ ցոյց կու տայ թէ Յոյները զինք կայսրութեան իշխաններու կարգը դասած էին, որքան որ ան բաւական ընդարձակ հողեր ունէր. Սենեքերիմ իր առանձին բանակը եւ սպարապետը ունէր. իր դայեալը՝ որ Շապուհ կը կոչուէր, ընդարձակ երկիրներու տէր էր: Սենեքերիմի Կապադովկիոյ կուսակալ ըլլալու հանդամանքը յիշատակուած է Կեդրե-նոսէն¹⁸:

Սենեքերիմի Պատրիկ եւ Զօրավար Կապադովկիայի կոչումէն հասկնալի կը դառնայ որ Սենեքերիմ, իբրեւ կուսակալ՝ կրնար իր իշխանութեան սահմաններուն մէջ տեղաւորել իրմէ աւելի փոքր ճորտեր, ինչպէս էին իր եղբորորդիները՝ Դերենիկ, Գազիկ եւ Աշոտ: Հաւանաբար այս պատճառով է որ Հայերը Սենեքերիմը «քագաւոր» կը կոչէին, քանի որ ան իր իշխանութեան տակ ունէր ճորտ իշխաններ:

Իսկ ինչ կը վերաբերի Սենեքերիմի եղբոր՝ Գուրգէնի որդի Դերենիկի, պատմութենէն գիտենք թէ ան որպէս աւատ ստացեր էր Մուտառասունը, ուր կ'ապաստանի, 1070ին, Գրիգոր Վկայասէր Կաթողիկոս: Մուտառասունը կը դառնուի շրջանի մը մէջ, ուր մինչեւ ԺԸ. դարու սկիզբները տախաւին կը գտնուէին բազմաթիւ հայ դիւ-

16. Հմմտ. ԱՂԵՔԱՆԴՐԵԱՆ Ա. Վ. Գ. էջ 139: ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՐԱՍՏԻՈՅԻ, Պատմութիւն Սեբաստիոյ, հրտ. Բ. Լ. Զուգասպետի, Երեւան 1974, էջ 32: Հմմտ. դարձեալ Տետէեանի սա արժէքաւոր աշխատութիւնը՝ հայկ. գաղթի աղբյուրներ. DEDEYAN GERARD, L'Immigration arménienne en Cappadoce au XI^e siècle, «Byzantion» (Revue Internationale des Etudes Byzantines, Bruxelles), tome XLV (1975), fasc. 1, էջ 41-116: TOURNEBIZE F., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris 1900, էջ 123-126:

17. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՐԱՍՏԻՈՅԻ, Գ. էջ 32:

18. Կեդրենոս յոյն պատմիչին այդ կարեւոր հաղորդումը տե՛ս GEORGIUS CÉDRENIUS, tome II, in Corpus Scriptorum Historiae Byzantinae, ed. J. Bekkero, Bonnae 1839, էջ 464: Հմմտ. նաեւ ԹԵՄՈՒՐԱԶԵԱՆ Վ. Հայերի արտագաղթը դէպի Գամիրք յօդուածը, տե՛ս «Տեղեկագիր հասարակական գիտութիւնների», Երեւան 1955, թիւ 2, էջ 78, ուր՝ սակայն ճշգրիտ չէ նշանակուած Կեդրենոսի յիշուած աղբիւրը: Դարձեալ ԱՌԱՔԵԼ Ն. ՊԱՏՄՈՒԹ, Թոյն, էջ 56:

ղեր, ինչպէս Կեոմիւրէն, Գամիրքան, Խնձորի պատմական գիւղերը: Այս վերջինը կը գտնուի Մուտառասունէն 6 հզրմդր. հեռու: (Մուտառասունը այժմ Թրքական փոքրիկ գիւղ մըն է, Կեմերեկէն 13 հզրմդր. հեռու, Բունարպաշի (Ազիզիէ) տանող ճամբուն վրայ)¹⁹:

Պատմական տուեալներու համաձայն, մենք կ'ենթադրենք որ Սենեքերիմի եղբորորդիներէն Դերենիկ եւ Աշոտ, իբրեւ աւատ ստացած ըլլան Սեբաստիայէն դէպի հարաւ-արեւելք գտնուող ջրարբի հողերը, ուր կը շինեն Մայր Ընտանիք (Մարընտունիկ) Արաբկիր եւ Աշոտի աւանները: Հետագային՝ Անիէն եւ Կարսէն եկող գաղթականները հոն կը շինեն բազմաթիւ այլ հայ գիւղեր: Մարընտունիկը՝ Անիէն եւ Կարսէն եկող գաղթականներով կը լեցուի, կը մեծնայ եւ կը հասնի մինչեւ Եփրատի ափը եկող Ակն քաղաքին. ասոր համար Մարընտունիկը՝ Թուրքերէն կոչուած է Ակն կամ Էկին: Այս մասին՝ Օսմանցի Թաղաւորներէն տրուած կան որոշ փաստաթուղթեր, ուր Ակնի տեղը կը կոչուի «Մարընտունիկի դագաւը»: Անտարակոյս, Արծրունիներու տան մէկ ճիւղը հաստատուած էր այդ կողմերը²⁰:

1022ին, երբ Վասիլ Բ. կայսեր դէմ կ'ապստամբի Նիկեիոր փոկաս, Սենեքերիմի որդին՝ Դաւիթ կը միանայ ապստամբին, իր բանակով. «Գնաց յաիւ նորա եւ Դաւիթ առ նա զօրօք Հայոց»: Վասիլ այս ապստամբ բանակէն կը սարսափի. «Եւ յգնաց Վասիլն առ Դաւիթ աղաչանս՝ զի հնարեցէ զկորուստ նորա. եւ Ծովիզն յոյժ սիրէր Գիւսիթ, եւ խոստացաւ նստուցանել զնա յաթոռ քաղաւորութեան Հայոց»²¹:

Բայց Դաւիթ չուղեց նենգել Վասիլի հետ դրուած դաշինքը, ուստի օր մը՝ Դաւիթ նենգութեամբ սպաննեց Նիկեիոր փոկասը: Լսեց Վասիլ եւ շատ ուրախ եղաւ. «Եւ տայր պարգեւս Դաւիթի զկեսարիա եւ զԾամնդաւ, եւ զամնայն խաւատանէֆն համդերձ սահմանօքն»²²:

Հ. Միքայէլ Զամչեան, Փոկասի ապստամբութեան գործակից կը դնէ նաեւ Սենեքերիմ Թաղաւորը, եւ կ'ըսէ թէ քրիստոնեաներու մէջ ըլլալիք խռովութիւնը կեցնելու, եւ Սեբաստիոյ կրեւիք վնասին առջեւ առնելու համար, իր որդւոյն Դաւիթի ձեռքով մեռնել տուաւ Փոկաս Ծովիզը եւ զլուխը շրջեց կայսեր, որ Խաւատանէքը Դաւիթի պարգեւեց²³:

Սենեքերիմ իր «Թաղաւոր» կամ «Արքայ» տիտղոսը պահեց մինչ-

չեւ իր մահը (1027). եւ Թաղաւորական Թաղումով մարմինը փոխադրեցին Վարադայ վանքը:

Սենեքերիմի մահէն ետք ալ՝ իր որդիները ջանացին արժանաւոր կերպով պահել «Թաղաւոր» տիտղոսը:

3. Սենեքերիմ ի՞նչ դրդապատմառով քաղուց իր հայրենի երկիրը եւ գնաց Սեբաստիա. իր ազատ որոշումով թէ բռնի՝ Բիւզանդիոնի Վասիլ Բ. կայսեր ստիպման տակ:

Ահա՛ կարելորդ եւ հետաքրքրական հարցում մը, որու մասին մեր պատմիչները չեն ուզած բացայայտ եւ որոշ եզրներով խօսիլ. անոնք, կարծէք, գաղտնի պահած են եւ շատ հեռաւոր ակնարկներով ուզած են յայտնել իրականութիւն մը, որ մեր պատմութեան համար կենսական է, եւ մութ կը մնայ:

Սենեքերիմ Վասպուրականէն Սեբաստիա գաղթեց եւ փոխադրուեցաւ, իր եւ իր ժողովուրդին ուղելով, թէ՛ բռնի ստիպման տակ: Դարձեալ պիտի քննենք մեր պատմագիրները. տեսնենք թէ ի՞նչ կ'ըսեն:

Ըստ Թովմա Արծրունիի պատմութեան շարունակողին, 1021ին տեղի կ'ունենայ Սենեքերիմի գաղթը դէպի Սեբաստիա, իր ամբողջ արքունիքով, ինչպէս վերը յիշեցինք. ան Վասիլ կայսեր կը յանձնէր 8 քաղաք, 400 գիւղ, 72 բերդ եւ 115 վանք. իրեն կը հետեւէին բազմահազար ժողովուրդ եւ 15.000նոց հայ բանակ մը, իրենց իշխաններով, զօրավարներով եւ արդուղարդով. «Թող զկանայս եւ զմանկտի». տեղափոխուած հայութեան թիւը կարելի է հասցնել շուրջ 40-50 հազարի:

Սենեքերիմ կայսեր տուած իր շրջաններէն մէկ մասին վրայ պահեց իր սեփականութիւնը: Ինչպէս կը տեսնուի, Սենեքերիմ Արծրունիի տուածը շատ աւելի էր՝ քան ինչ որ փոխարէն ստացեր էր Փոքր Ասիոյ մէջ:

Սենեքերիմ Արծրունի Թաղաւորը երթալով Սեբաստիա, կը յուսար իր կեանքին վերջին տարիները անցընել խաղաղութեան եւ պահովութեան մէջ: Սակայն, իր նոր տէրութեան մէջ՝ ամէն ինչ իր ուզածին պէս չեղաւ. հիասթափ ըլլալու պատճառներ ունեցաւ, մանաւանդ Վասիլ Բ. կայսեր հանդէպ, ինչպէս պիտի տեսնենք:

Թովմա Արծրունիի համաձայն, արտադաղթի դրդապատճառ եղած է միջասիական բարբարոս Թուրքերու յարձակումը, որուն դէմ պաշտպանուելու համար, Սենեքերիմ Թաղաւորը ոչ մէկէն օգնութեան յոյս ունէր, «քաց ի տեսնէ, եւ օգնականութիւն տեսնէր ի քիլուսն արքային Յունաց, եւ յայնժամ ունէր զկայսերական իշխանութիւնն զաստուածապահ քաղաքին զկոստանդնուպոլիսի, այր ուն

19. Հմմտ. Ա. Ն. ՊԱՏՐԻԿ, Ե. Գ. էջ 50-57:

20. Հմմտ. Քեմալ Ա., Ակն եւ Ակնեցիք, հտ. Ա., Պուրէն 1954, էջ 12-13:

21. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Ե. Գ. էջ 28:

22. Նոյն, Ե. Գ., Բ. տ.,

23. ՉԱՄՉԵԱՆ Հ. Մ., Ե. Գ. էջ 208: Հմմտ. նաեւ ԱՂԵՐՍԱՆԴՐԵԱՆ Ա. Վ. Նոյն, էջ 141-142:

աստուածասէր եւ բարեպաշտ վասիլ անուն կոչեցեալ, եւ ոչ էին ձեռնհաս քաղաքին Յունաց ի վերայ աշխարհին Հայոց, այլ ինքեանք կամաւ ունէին գտերութիւնս գաւառաց իւրաքանչիւր ոք, եւ ոչ ժուժէին յարձակման այլագգեաց: Յայնժամ իբրեւ որդի առ հայր դիմեցին մնացորդք տանն Թորգոմայ առ քաղաքն Յունաց. եւ նոքա լցեալ աստուածային սիրով՝ գթացան յաղաչանս որդւոցն, եւ կոչեցեալ առ իւրեանս յիւրաքանչիւր գաւառաց՝ եւ տային պարգեւս եւ կարգեցին ի դուռն արքունի եւ տային փոխանակ քաղաքացն՝ քաղաքս մեծամեծս եւ փոխանակ բերդիցն՝ բերդս անմատոյցս, եւ գաւառս եւ գեօղս, ագարակս եւ սուրբ մեծաստանս»²⁴:

Պատմիչը իրադարձութիւնները դուռնադարձարած է, եւ իր Թաղաւորին արարքը ներկայացուցած է իբրեւ անեղանելի դրութենէ միակ էլք, դիմելով կայսեր «իբրեւ որդի առ հայր»:

Իրողութիւնը, սակայն, բոլորովին տարբեր կը թուի. վասիլ Բ. կայսր, ինչպէս իր նախորդներէն չատեր, թէեւ հայկական ծագումով, սակայն բիւզանդական վաղեմի քաղաքականութեան ջերմ հետեւորդներ, նպատակ ունէին նորանոր աշխարհակալական պատերազմներ մղել՝ հպատակ ժողովուրդները ենթարկելու համար ձուլումի, ստեղծելով կայսրութեան մէջ միատարր ժողովուրդ:

Վասիլ Բ. ի օրով Բիւզանդական կայսրութեան սահմանները հասած էին հեռուները, եւ կայսրութիւնը կը գտնուէր իր զօրութեան գագաթնակէտին: Անդլիացի պատմաբան Ֆինլէյ, կըսէ. «Վասիլ Բ. ի կառավարութիւնը ցոյց կու տայ բիւզանդական հզօրութեան ամենաբարձր աստիճանը: Պոլսոյ արծիւները, անոր կենդանութեան ժամանակ, կը քոչէին երկար յաղթական մանապարհով՝ Դանուբի ափերէն մինչեւ Նիքիտի ափերը, եւ հայկական լեռներէն մինչեւ Խալկոն ծովագերբը: Վասիլի անընկնելի քաջութիւնը, անոր սուկալի խստաւարութիւնը, անոր անտարբերութիւնը դէպի գեղարուեստը եւ գրականութիւնը եւ անոր կրօնական քերականաստութիւնը, բոլորը կը միանան՝ որպէսզի անոնցմէ ստեղծեն իր տէրութեան եւ իր ժամանակին մէկ տիպարը: Անոր կառավարական քաղաքականութիւնը էր Եւրոպայի պետական վարչութեան միութիւնը ամրացնել՝ բոլորովին նուաճելով Պուլկարները եւ Սլաւները, որոնք լեզուական մամուլութեամբ միացած էին մէկ ազգութեան մէջ եւ ասկէ գտնուէին իրենց անհաշտ ատելութեամբ դէպի կայսերական կառավարութիւնը»²⁵:

Հոս կարեւոր նկատի առնելիք կէտ մըն է՝ որ բիւզանդական իշխանութիւնը օգտուելով արաբական խալիֆաներու թուլացումէն,

24. ԹՈՎՄԱՍ ՎՐԴ. ԱՐՄԻՈՒՆԻ, Պատմութիւն Տանն Արծրունեաց, հրատ. Գ. Պ., Ս. Պետերբուրգ 1887, էջ 307:

25. Ֆինլէյ, հմտ. ԱՊՈՅԱՅԵԱՆ Ա., Պատմ. Հայ. Գաղթի. հտ. Ա. էջ 306:

Ժ. դարուն վերջին քառորդին սկսեցին նուաճել Բարձր Հայքի գաւառները: Իսկ 966-967ին, Տարօնի Կիւրապաղատ Աշոտ Բագրատունիի մահուան տոթով, գրաւեց էր Տարօնը: 968 թուականին, բիւզանդական բանակը կը յառաջանար դէպի Ապսիդոնիք գաւառը, եւ կը դրաւէր Մանազկերտ քաղաքը: Յաջորդաբար վասիլ Բ. կայսրը կը բիւզանդական աշխարհակալութեան ձգտումներուն մեծագոյն շարունակողը, ղինուորական հզօրութեան կը միացնէր նենգամիտի իր տաղանդը. օգտուելով քաղաքական ինչ ինչ հանգամանքներէ՝ իր տաղանդը. օգտուելով քաղաքական ինչ ինչ հանգամանքներէ՝ ստիպեց էր որ Տայքի Կիւրապաղատ Դաւիթ իշխանը, որ զաւակ չուներ, իրեն կտակէր, այն է՝ Բիւզանդիոնի, իր երկիրը: Ու երբ 1000 թուականին կը վախճանէր Դաւիթ, վասիլ Բ. ո'չ միայն կը դրաւէր Տայքը, այլ եւ անոր ենթակայ Բասենը եւ Ապահունիքը²⁶:

Ապսիդոնիք սահմանակից էր վասպուրականի. կարգը, ուրեմն, հասեր էր վասպուրականին: Վասիլ Բ. պէտք չունէր վասպուրականը դրաւելու համար բանակներ շարժման մէջ դնելու. բաւական էր իր դաժան աշխարհակալի համբաւը, ծունկի բերելու համար ո'րեւէ փոքր թագաւորութիւն:

Արդարեւ վասիլ Բ. տասնեւհինգ տարի (999-1015) պատերազմներ էր պուլիարներուն դէմ, ու այնպէս դաժանօրէն ջախջախեց էր զանոնք՝ որ «Պուլկարասպան» կը կոչէին դիմքը: Բացի անհամար զանոնք՝ որ «Պուլկարասպան» կը կոչէին դիմքը: Բացի անհամար զանոնք՝ որ «Պուլկարներու սպանութենէն», գերի տարած էր 15.000 ղինուորներ Պուլկարներու սպանութենէն, գերի տարած էր 15.000 ղինուորներ, եւ անոնց աչքերը կուրցուցեր էր, հարիւրին մէկը միակամի ձգելով, որպէսզի կարենան անոնք իրենց երկիրը վերադառնալ: Միեւնոյն ժամանակ նոյնպէս խիստ կերպով ճնշեց էր Արիստակ-Վրացական աւարտամբութիւնը, եւ առիթէն օգտուելով՝ կը ձգտէր վերջ տալ կայսրութեան սահմաններուն վրայ կազմուած փոքրիկ թագաւորութիւններուն, որոնցմէ մէկն էր վասպուրականի քաղաքութիւնը, թիւններուն, որոնցմէ մէկն էր վասպուրականի քաղաքութիւնը, համոզուած ըլլալով որ այդպէս աւելի լաւ կերպով պաշտպանած պիտի ըլլար իր կայսրութիւնը:

Ուրեմն, վասիլ Բ. ոչ թէ «լցեալ աստուածային սիրով» հաճեր էր ընդունիլ Սենեքերիմ թագաւորի առաջարկը, ինչպէս մեր պատմիչները կը ներկայացնեն, այլ՝ ընդհակառակն, կայսրը ինք արծարծեց էր այդ հարցը, որ անշուշտ առաջին անգամ չէր որ կը ներկայանար:

Ու վասպուրականի թագաւորը՝ Սենեքերիմ, որ իրապէս անօդանական էր, քանի որ Բագրատունի թագաւորներուն հետ ալ զգտուած էր, եւ Ատրպատականի արաբ ոստիկաններէն ալ շարունակ նեղուած, ճարահատ կ'ընդունէր կայսեր առաջարկը:

26. Հմտ. ԱՍՈՂԻԿ ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՕՆԵՑԻ, Պատմութիւն Տիեզերական, Բ. տիպ, հրատ. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ 1885, էջ 183:

Հետեւաբար, Վասպուրականի յանձնումը Բիւզանդական կայսրութեան՝ բոլորովին կամաւոր, խաղաղ բնոյթ չէր կրեր, ինչպէս կը ներկայացնեն հայ պատմիչներ:

ԺԱ. դարուն յոյն Կեղերոնոս պատմիչը հետեւեալ կերպով կը ներկայացնէ այս հարցը. Արծրունիները կը դադրեն Բիւզանդիոն եւ կայսրութեան կը յանձնեն Վասպուրականը, «որուն իշխան կը զրկեն Պատրիկ Վասիլ Արզիրոսը. ան ամէն բանի մէջ անյաջող երեւելով՝ պաշտօնէն կը հանուի, եւ տեղը կը դրուի Նիկեիոս Կոմնենոս զօրավարը, որ երթալով Վասպուրական՝ մասամբ համոզելով, մասամբ բռնութիւն գործադրելով, երկիրը կայսեր կը հպատակեցնէ»:

Կեղերոնոսի այս շատ նշանակալից ակնարկէն կը տեսնուի որ Վասպուրականի բնակչութիւնը դէմ եղած է Արծրունիներու արտագաղթին. եւ անմիջապէս ազատագրական պայքար կը սկսի մղել Բիւզանդիոնի բռնատիրութեան դէմ: Ամէն պարագայի, Վասպուրականը կը դառնայ Բիւզանդիոնի ասիական թեմերէն մէկը²⁷:

Այս պատմական տուեալէն կը հետեւի թէ Վասիլ Բ. ստիպած է Սեմեֆրիմը հրաժարիլ իր երկրէն եւ գալ բնակիլ Սեբաստիա:

Այս մասին, Մ. Ուռհայեցի եւս ակնարկ մը ունի, որ շատ նշանակալից է. Սենեքերիմի մահէն վերջ, երբ Սեբաստիոյ վրայ կ'իջխեն իր երկու որդիները՝ Ատոմ եւ Արուսազ, իրենց դէմ եղած սուտ ամբաստանութիւնները լռեցնելու համար՝ յանձն կ'առնեն մինչեւ Պոլիս երթալ, արդարացնելու համար իրենք զիրենք եւ ցրուելու կայսեր դէմ ապստամբութեան զրպարտութիւնները: Երբ Պոլիս կը հասնին, անոնք ուղղակի կ'ուզեն երթալ Վասիլ Բ. կայսեր դերեղմանին այցելութեան. եւ երբ հոն կը հասնին, իրենց ծոցէն կը հանեն անոր ձեռագիր նամակը եւ դերեղմանին վրայ դնելով կ'ըսեն. «Դու բերեր զմեզ յաշխարհս Հոռոմոց, եւ ահա մահու սպառնալ մեզ: Դատ արա մեզ յոստիսէն մերմէ»²⁸:

Այս խօսքերը նշանակալից են, նեղուած սրտերէ բխած, եւ ցոյց կու տան որ Հայերը իրենք իրենց կամքով չէ որ եկած էին Սեբաստիա, այլ կայսրը՝ Վասիլ Բ. զիրենք բերած էր. «դու բերեր զմեզ» զոչելով, անոնք ըսել կ'ուզեն՝ թէ մենք մեր ուղեւոր չեկանք, կերպով մը դռն բռնի ստիպումով բերիր մեզ. այս խօսքերը կը հաս-

27. Այս հատուածին համար՝ աչքի առջեւ ունեցած ենք ԱՌԱՔԵԼ Ն. ՊԱՏՐԻԿԻ 62. գ. էջ 51-54: Վասպուրական նահանգի վարչա-քաղաքական վիճակի մասին տե՛ս Ինձինձեան ՀԱՅՐ ՂՈՒԿԱՍ, Ստորագրութիւն Հին Հայաստանաց, Վենետիկ - Ս. Ղազար 1822, էջ 156-228: ՅԱԿՈԲԵԱՆ Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրութիւն, Բ. տիպ, Երեւան 1968, էջ 174-191, եւ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ, Հայաստանի բերդերը, Վենետիկ - Ս. Ղազար 1970, էջ 253-343:

28. ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՅԻ, 62. գ. էջ 97:

տատեն Կեղերոնոսի ըսածները՝ թէ «մասամբ համոզելով եւ մասամբ բռնութիւն գործադրելով»:

Մ. Ուռհայեցի ուրիշ առթիւ եւս հեռաւոր ակնարկ մը կ'ընէ այս բռնի գաղթի մասին. երբ Լէնկիթիմուր կու գայ եւ կը դրաւ Սեբաստիան, կը քանդէ զայն եւ անհամար մեռեալ թողած կը վերադառնայ իր երկիրը, պատմիչը սրտի ցաւով կը յիշէ Վասիլ Բ. կայսեր արարքը՝ ըսելով. «վասն զի մի առ մի քակեալ հանին զգորականսն ի տանէն Հայոց՝ զորս հանին յարկաց եւ ի գաւառաց, եւ բարձեալ խափանեցին զաքոռ քաղաքութեանն Հայոց»²⁹:

Այս տողերը կը գրէ պատմիչը՝ երբ կը խօսի Սեբաստիոյ դրաւումի մասին, եւ «զաթող թաղաւորութեան Հայոց» ըսելով՝ կը հասկընայ Սենեքերիմի թաղաւորութիւնը:

Այս բռնագաղթի իրականութիւնը կը հաստատէ նաեւ Միքայէլ Ասորի պատմիչը, որ ժամանակով շատ ուշ չէ, ինչպէս տեսանք վերեւ³⁰:

Այս բոլորը մեղի համար համոզիչ փաստեր են, որ եղրակացնենք՝ թէ Սենեքերիմ թաղաւորը, ստիպման մը առջեւ բռնաբարուած, դադրած է Սեբաստիա, եւ ոչ թէ իր ազատ կամքով կայսեր յանձնած է Վասպուրականը:

4. Ի՞նչ վերջ ունեցան Սեբաստիոյ հայ քաղաքութիւնը եւ անոր շուրջ բնակող հայ իշխանները:

1027ին, Սենեքերիմի կը յաջորդէ իր որդին՝ Դաւիթ. «Եւ քաղաքացիս տեղի Սեմեֆրիմայ երէց որդի նորա՝ Դաւիթ», կամ ինչպէս կ'ըսէ Ուռհայեցի պատմիչը՝ «Եւ հաստատեալ լինէր քաղաքին իշխանութիւնը տանն Հայոց յաւագ որդին իւր ի Դաւիթ, տրական իշխանութիւն տանն Հայոց յաւագ որդին իւր ի Դաւիթ, վասն զի էր այր փառաւոր եւ պատուական եւ ահարկու ի վերայ երկրի»³¹: Դաւիթ ուժեղ բանակի տէր էր, որմէ կ'երկնէր նոյնիսկ Բիւզանդիոնի կայսրը: Ան տասը տարի կը թաղաւորէ եւ կը վախ-

29. Նոյն, 62. գ. էջ 162:

30. Տե՛ս Ծանօթ. 10: Ներկայիս Բիւզանդա-թրքական յարաբերութիւններու մէջնէն հեղինակաւոր մասնագէտներէն՝ C. Cahen եւս կը հաստատէ այս տեսութիւնը, շեշտելով թէ Վասպուրականի յանձնումը Սենեքերիմի կողմէ, չէր թրեւար արդիւնք ըլլալ «Թիւրքմենական» ճնշումներու. հմտ. CLAUDE CAHEN, La première pénétration turque en Asie Mineure, in «Byzantion» XVIII (1946-48), էջ 5-67, վերոյ. ՆՈՅՆ, Turcobyzantinica, I, London 1974: ՆՈՅՆ, La diplomatie orientale de Byzance face à la poussée Seldjoukide, «Byzantion» XXXV (1965), էջ 10-15, վերոյ. ՆՈՅՆ, Turcobyz, III. ՆՈՅՆ, A propos de quelques articles du «Köprülü Armaganı», «Journal Asiatique», 1954, էջ 275-279, վերոյ. ՆՈՅՆ, Turcobyz. IV.

31. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ՍԵՐԱՍՏԻՈՅ, յիշ. աշխ., էջ 33: ՄՏԹ. ՈՒՌՀԱՅԵՅԻ, 62. գ. էջ 62:

Իսկ Ատոմ եւ ԱրուսաՀլ կ'ապաստանին Կ. Պոլիս եւ հոն կը մնան մինչեւ Սելճուք թուրքերու մեկնումը. 1061ին անոնք կը վերադառնան Սեբաստիա, ու դեռ ժամանակ մը, չուրջ քսան տարի, կը շարունակեն վարել իրենց հօր ժառանգ թողած իշխանութիւնը:

Այս բոլորէն կը նշմարուի նաեւ թէ որքան որ Յոյները իբրեւ ճորտ կ'ուզէին նկատել Սենեքերիմի որդիները, սակայն անոնք իրենց թաղաւորական իրաւունքներէն ու պատիւէն հրաժարած չէին: Հայ ժողովուրդն ալ զանոնք այդպէս կը ճանչնար, եւ իբր արքայ կը յարգէր ու կը պատուէր զիրենք:

Բայց պիտի պատահէր անխուսափելին:

Մանազկերտի առջեւ յունական բանակի աղիտալի պարտութենէն վերջ, Ատոմ եւ ԱրուսաՀլ ո'րչափ ատեն մնացին Սեբաստիա եւ պահեցին իրենց իշխանութիւնը այդ քաղաքին վրայ, դժուար է բան մը ըսել. պատմիչները կը լռեն. 1074ին, Ալփաւլանի հրամանով՝ Սիւլէյման, որդի Գութուլմայ, տիրեց այդ կողմերն ու կանգնեց սուլթանութիւն մը՝ նախ Նիկիոյ մէջ, եւ ապա Գոնիայի մէջ. ասկէ յայտնի է որ Սեբաստիա, Ամասիա, Կեսարիա եւ ուրիշ քաղաքներ ինկան թուրք իշխանութեան ձեռքը: Եւ Սեբաստիոյ երկու տէրերը, հաւանաբար դացին Գադիկ Աբասեանի քով՝ Մամուդաւ. արդարեւ, երբ Գադիկ ձերբակալուեցաւ Մանտալեաններէն, Ատոմ եւ ԱրուսաՀլ, ուրիշ իշխաններու եւ իրենց զօրքերով՝ դացին եւ պաշարեցին անոնց բերդը:

Ատոմ եւ ԱրուսաՀլ, վախճանեցան 1080ին. այդ թուականով վերջ կը գտնէր Արծրունի իշխաններու պայազատութիւնը. մեր պատմիչներն ալ անկէ վերջ չեն յիշեր անոնց յաջորդութիւնը: «Պատմութիւն Սեբաստիոյ» գրքին հեղինակը, սակայն, կ'ըսէ թէ «հանդիպեցաւ ինձ տեսնել իրենց յաջորդութեան նկատմամբ, հայ ազգատոհմի մը ծննդեան ծառը, յորում այս Արծրունի տոհմը Պերոզի եւ Խոսրովի սերունդներով՝ կ'իջնէր մինչեւ մեր ժամանակները: Կը ցաւիմ որ Կ. Պոլսոյ հրդեհ մը յափշտակեց իմ ձեռքէս այդ կարեւոր տետրը՝ ուրիշ գրուածներու հետ»³⁶:

Սեբաստիոյ Արծրունի իշխանութիւնը տեւեց, ուրեմն, յիսուն տարի, 1021-1071, քիչամ ըստ ոմանց՝ 60 տարի, 1021-1080:

Անկէ վերջ Սեբաստիա կ'իյնայ Դանիշմէնեան իշխանութեան ձեռքը. հայ իշխաններ եւ բազմահազար հայ ժողովուրդ շարունակեցին ապրիլ Սեբաստիոյ եւ անոր շրջաններուն մէջ, Իկոնիոյ թուրք սուլթաններուն հովանաւորութեան տակ, անոնք ունեցան իրենց առաջնորդարանները եւ եպիսկոպոսները՝ երկար տարիներ: Սեբաստիա ունեցաւ ապա բարգաւաճ շրջան մը: Օսմանեան կայսրութեան

36. ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ Ա. Վ., Գ. էջ 164-165:

շրջանին եւս, Սեբաստիա հայաշատ քաղաք մըն էր, որ տուաւ ականաւոր անձեր, որոնց մասին խօսիլ մեր նպատակէն դուրս է:

Ժէ. դարու առաջին շրջանին, Ապտուհարիմ «Ջալալի» կոչուած ապստամբը, որ ծանօթ է Քարա-Եազըճի անունով, սարսափ կը սըփռէր ամէն կողմ: Անկարագրելի են, այդ շրջանին, Սեբաստիոյ հայութեան կրած տառապանքները:

Սելէիսեթ Սեբաստացին՝ Քարա-Եազըճի արշաւանքին առիթով կը պատմէ. «Մատնեցաւ քաղաքն եւ երկիրն մարդով եւ անասնով, ընչուք եւ ապրանաւքն ի ձեռն արեւմտարու գաղամին, որ անխնայ կատորեաց բազում քրիստոնեայս... եւ բազում աւուրս մտեալ յեզր քաղաքին՝ այրեաց եւ աւերեաց զգեղեցկաշէն քաղաքն եւ գաւառն, մինչ զի ամալի մնաց Սեբաստիա քեմովն եւ վիճակովն բազում ժամանակս»³⁷:

Սեբաստիա շարունակեց մնալ մինչեւ 1915 որպէս հայ կեդրոն մը. այնուհետեւ ջարդի տխուր վարդոյրն իջաւ այնտեղ. բնակիչները բռնեցին աքսորի ճամբան, դէպի անապատները. ու Սեբաստիա մնաց հայազուրկ³⁸:

5. Ի՞նչ տեսակ քաղաք էր Սեբաստիա, պարսպապատ քէ անպարսպ: Եթէ պարսպապատ էր, որովհետեւ ո՞ր քուակամին պարսպապատուեցաւ:

Սեբաստիա, այժմ Սըվազ, Փոքր Ասիոյ հին քաղաքներէն մէկն էր, Ալիս գետի հովիտին մէջ: Հին ատեն՝ ամրոց մը եղած է ան, որ կը կոչուէր Կապիքա. այս ամրոցին մօտ, Հռոմէացիները մեծ յաղթանակ մը տարին Պոնտոսի Միհրդատ թագաւորին վրայ: Սեբաստիա ժամանակ մը մաս կազմած է Պոնտոսի եւ վերջն ալ Առաջին Հայոց դիմաւոր քաղաքը համարուած է: Պոնտոսի Պիտոնդորիս թագուհին զայն կ'ընդարձակէ եւ Սեբաստիա կը կոչէ, այսինքն՝ Օգոստոսին զայն կ'ընդարձակէ եւ Աստատէ իր բնակութիւնը: Կոստան, ի պատիւ կայսեր, եւ հոն կը հաստատէ իր բնակութիւնը: Միհրդատ ալ հոն փառաւոր պալատ մը կը շինէ, եւ Սեբաստիա Պոնտական քաղաքներէն մէկը կ'ըլլայ, ինչպէս կը յիշատակէ Պտղոմէոս:

Այս քաղաքին սկզբնաւորութիւնը եղած է Ք. Ա. 150ի ժամանակները: Տաշեան կը համարի թէ Սեբաստիոյ սկզբնաւորութիւնը եղած ըլլայ հռոմէական կայսրութեան շրջանին, գրելով «Սեբաստիա հռոմէական հիմնարկութիւն մըն է» առանց, սակայն իր հա-

37. Երեւանի Պետական Համալսարան ձեռ. թիւ 1875, էջ 229թ. Հմմտ. ԱՆԱՍՅԱՆ Հ. Ա., Ժէ. դարի ազատագրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում, Երեւան 1981, էջ 23:

38. Հմմտ. ՆՈՅՆ, Գ. էջ 168 եւ յջ.: ԱՌԱՔԵԼ Ն. ՊԱՏՐԻԿ, Գ. էջ 90 եւ յջ.:

պէկ մը՝ պարիսպը նորոգած եւ դիմադրած է Սուլթան Մեհմետ Ա.ի»⁴³։

Ա.— ԴՈՒԿԱՍ ԲԻԼԳԱՆԴԱՅԻ պատմիչը (1400–1470) կը գրէ. «Թիմուր քաղաքը շրջապատող պարիսպին հիմերուն տակ փորել տուաւ դուրսէն, եւ ներքեւը ցիցեր ու տախտակներ դնել տուաւ, որով պարիսպը ամրագրուիլն հանգչեցաւ ցիցերուն վրայ»։

Բ.— ԽԱՐԳՈԳՈՆՏԻԼԻՍ ԲԻԼԳԱՆԴԱՅԻ պատմիչը (չուրջ 1432–1480) կը գրէ. «Թիմուր օրերով քաղաքին հետքերը տեսնելու համար քաղաքը պարիսպին վնասուած մասերը կը նորոգէին գիշերը, որով կարելի չէր չվնասել անոնց... պարիսպները փայտաշէն էին, դիւրաւ կրակի տրուեցան»։

Պարիսպներուն փայտաշէն ըլլալը տարօրինակ կը թուի. առաջին անգամ է որ փայտաշէն պարիսպներու կը հանդիպինք. պատմիչը արդեօք ըսել կ'ուզէ թէ փայտերով ամրացուած էին։

Գ.— ԹՈՎԱՄ ՄԵՇՈՓԵՑԻ ԵՆԱ կը գրէ Սերաստիոյ պարիսպներուն մասին, եւ կը նշէ որ անոնք զօրաւոր էին. «Եւ նոցա բացեալ զքաղաքն ելին ընդ առաջ նորին»⁴⁴։

Դ.— ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑԻ (1350–1425) «Յիշատակարան Աղիտից»-ի մէջ կը գրէ չափաւոր.

«Մայրաքաղաք Սերաստիայ
Մաստիկ հարուած եհաս նըմայ,
Ջոր պաշարեալ ըզմա առին,
Եւ նորաճել պաշար տուին»⁴⁵։

Ե.— ՀԱՆՍ ՇԻԼՊԵՐԿԵՐ, որ Պայազետի բանակին մէջ կը ծառայէր, կը գրէ. «Թիմուր (Թեմուրլին) 100.000 զինուոր հաւաքեց եւ մտաւ Սերաստիոյ քաղաքը՝ սահմանները՝ որուն մայրաքաղաքը Սերաստ քաղաքը պաշարեց 21 օր։ Պարիսպին տակ գտնուող տեղերէ ահաններ փորել տուաւ եւ քաղաքը գրաւեց զինուորական ոյժով...»։

Զ.— ԳԼԱԻԻՍՈՅ, նպանիացի ուղեգիր եւ դեսպանը (չուրջ 1403), կը գրէ. «Եւ նոյն միջոցին իր բանակը պարսպին դուռներուն վրայ

43. ՆՈՅՆ, նշ. գ. էջ 271–272: Սերաստիոյ պարիսպներու առեւտրային կառարուած յաջորդ տասը պատմական հաղորդումները՝ քաղաքն ենք Պէրպէրեանի նոյն արժէքաւոր յօդուածէն՝ 278–287 էջերէն։

44. ԹՈՎԱՄ ՄԵՇՈՓԵՑԻ, Պատմութիւն Լամկ Թիմուրայ եւ յաջորդաց իւրոց, Փարիզ 1860, էջ 84–85։

45. Լ. ԽԱՉԻԿԵԱՆ, Ժ. Դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Հտ. Ա, Երեւան 1955, էջ 28։

գրահ տալով քաղաք պիտի մտնէր... յետոյ պարիսպը քանդուեցաւ եւ տուններուն մեծագոյն մասը հիմնայատակ կործանեցաւ»։

Է.— ԴՈՄԻՆԻԿԵԱՆ ԿՐՕՆԱՒՈՐ ՄԸ (Jean, évêque de Sultane) 1403-ին կը գրէ. «Այս Թեմիքայէն գնաց Սերաստիա մեծ քաղաքին դէմ... որուն պարիսպին մօտերը հինգ օրուն մէջ աշտարակ մը շինել տուաւ, ուրկէ կրնար տեսնել ամբողջ քաղաքը»։

Ը.— ՆԻՉԱՄՈՒՏՏԻ ՇԱՄԻ արաբ պատմագիրը կը գրէ. «(Թիմուրի բանակը) քաղաքը պաշարեց։ Պարիսպը շատ բարձր էր եւ ամրակուտ։ Արեւելեան, հիւսիսային եւ հարաւային կողմերը ջրալից լայն փոս մը փորուած էր, եւ փոսին մէջ այնքան շատ էր ջուրը՝ որ կարելի չէր այդ կողմերէն ծակ բանալ պարիսպին մէջ, որովհետեւ ջուրը գետնին ներքեւէն կը բխէր։ Կարելի էր բերդին արեւմտեան կողմէն, ուր կը գտնուէր բանակը, ծակ բանալ։ Պարսպին մէջ կը գտնուէր Պայեզիտի կողմէ նշանակուած Մուսթաֆա անուն էմիր մը... էմիր Թիմուր հրամայեց պարսպին շուրջը արքատաներ (հրացայտ մեքենաներ) մանգամաներ (ֆարընկեց մեքենաներ) դնել։ Պարիսպին դիմացը բարձր աշտարակներ շինուեցան եւ սկսան պատերազմիլ։ 18 օր այսպէս անցաւ։ Պարիսպին շրջապատը մասերու բաժնելով ծակեր (ականներ) բացին»։

Թ.— ՇԱՐԱՑՈՒՏՏԻՆ ԱԼԻ ԵԱԶՏԻ կը գրէ. «Սիվաք քաղաքը շրջապատուած էր ամենահզօր պարիսպով, որմածակերէն մինչեւ հիմերը սրբատաշ քարերով։ Մէն մի քար երեք կանգուն երկարութիւն, եւ մէկ կանգուն քանարութիւն ունէր, իսկ բարձր մասը՝ վեց։ Պարիսպին բարձրութիւնը քան կանգուն էր։ Եօթը դուռ ունէր, անոնց փեղկերը երկաթեայ էին։ Պարիսպը շինած էր (սելուկներ, անոնց փեղկերը երկաթեայ էին)։ Այսպէս Քայքայատ։ Արեւելեան, հիւսիսային եւ քիսան սուլթան) լայնատիւն քաղաքուած էր ջրալից փոսով մը, այնպէս հարաւային կողմերէն շրջապատուած էր ջրալից փոսով մը, այնպէս որ անկարելի էր այս կողմերէն պարիսպին հիմերը փորել... Պարիսպին շարունակը հրաքի դուռին դիմացը քաղաքէն աւելի բարձր տամալի շարունակը հրաքի դուռին դիմացը քաղաքէն աւելի բարձր տամալի մը բարձրացուցին, որուն վրայ ֆարընկեց մեքենաներ դրին... Պարիսպին պատերը փլցնելու համար խոյր ալ գետնիցին... Տասնութօրեայ պաշարումէն ետք, խոյրուն ուժգին հարուածները եւ խոյր բարերու արձակումը սկսան պարիսպը խախտել եւ ճեղքեր բանալ»։

Ժ.— ԻՊՆ ԱՐԱՊՇԱՀ (ծնած Դամասկոս 1392-ին) կը գրէ. «Յետոյ Թիմուրլինն ուղղուեցաւ դէպի Սիվաս քաղաքը, ուր կը գտնուէր Սիվէյման... ամրացուց քաղաքը եւ միջնաբերդը... պարիսպին վրայ պահակագործներ դրաւ... Թիմուրլինն պարիսպին առջեւ հասաւ իր հեղեղներով... քաղաքը պաշարեց եւ արդարեւ առաջին յարձա-

կումին 18 օր ետք գրաւեց... Այս փառաբեր աշխարհի ամէնէն գեղեցիկ փառաբերեմ մէկն էր, շատ գեղեցիկ վայրի մը մէջ, ամբաշէն եւ ամբաշէն...»:

Արդ, այսքան մէջը բերումներէ եւ պատմական հաւաստումներէ ետք, ի՞նչ կարելի է եղբակացնել Սեբաստիոյ քաղաքին պարսպապատ կամ անպարսպ ըլլալուն մասին:

Ա) Սեբաստիա շատ հին ատեններէ ի վեր, մինչեւ 1060 թուականը անպարսպ էր, ինչպէս կը գրէ Մ. Ուռհայեցի: Կամ՝ Թեոփիլ ամենահին պարսպը կործանած, անյայտ էր:

Բ) Թաթարներու եւ սելճուք արշաւանքներէն յետոյ, պէտք ըզգացուեր է զայն պարսպապատել. 1136ին, Սեբաստիան կը գրաւուի իկոնիոյ Ալաէտտին Քայսապատ սուլթանէն, որ զայն հզօր պարսպներով կը զօրացնէ, ինչպէս կը գրէ Շարաֆուտտին պատմիչը. հաւանաբար 1237-1247ի շրջանին է որ ամբողջացած ան Սեբաստիոյ պարսպները. այնպէս որ Սենեքերիմ եւ իր յաջորդներու թաղաւորութեան շրջաններուն՝ Սեբաստիա անպարսպ էր: Թիմուրլէնկ կը կործանէ այդ պարսպներէն մաս մը, սակայն անոնց հետքերը եւ մնացորդները կը շարունակեն տեսնուիլ ինչ ինչ տեղերու մէջ, ինչպէս կը վկայէ Ինճիճեան. «ուրեք ուրեք երեւին անկեալ հատորը նախնի պարսպին, զոր կործանեաց Թիմուրլէնկ»⁴⁶:

6. Որո՞նք էին Սեբաստիոյ բերդերը:

Այս առիթով՝ քանի մը խօսք ալ կ'ուզենք ըսել Սեբաստիոյ բերդերուն մասին:

Սեբաստիա ոչ միայն պարսպապատ եւ զօրաւոր քաղաք մըն էր, այլ եւ պարսպներէն ներս ունէր երկու բերդեր, որոնցմէ մէկը Թօրաֆ-Գարու կը կոչուէր կամ Վերին բերդ, իսկ երկրորդը՝ Թօրաֆ-Գալէ կամ Ստորին բերդ:

Ինճիճեան կը գրէ. «Ունի բերդ կրկին ի մէջ փառաբեր, որք կոչին Վերին եւ Ստորին: Վերինն՝ քաղաքէն, ի վերայ բլրոյ փայլաբալ... ստորին բերդն նոյնպէս փայլաբալ է, առ ստորստով բլրոյն»⁴⁷:

Թօրաֆ Գարու կոչուած բերդը երկրորդէն աւելի հին է: Մեր աղբային պատմութիւնը կ'աւանդէ՝ թէ Պոնտոսի Միհրդատ Թաւաւորը, այս քաղաքին մէջ Հռոմէացիներու հետ պատերազմած ժա-

47. ՆՈՅՆ, Զ. Գ. էջ 285:

48. Ինճիճեան, Հ. Ղ., Զ. Գ. էջ 284:

մանակ՝ հոն բերդ մը շինել տուած է: Շատ հաւանական է որ Միհրդատի շինած վերոյիշեալ Թօրաֆ Գարու ըսուած բերդը ըլլայ:

Այս վերին բերդը՝ քաղաքին միջնաբերդն էր, եւ կը բարձրանար հողաբլուրի մը վրայ, ուր կը տեսնուէին կործանած եկեղեցիներու հետքեր. հոն կային 180ի չափ տաճիկներու տուններ. միեւնոյն բլուրին դադաթը, փայտաշէն աշտարակի ձեւով, ժամացոյց մը կար, որուն չորս կողմը քառասուն քայլ էր. հնչած ժամանակ՝ քաղաքին բոլոր բնակիչները կը լսէին. բլուրը բաւական բարձրութիւն ունէր, որուն վրայէն կարելի էր ամբողջ քաղաքը տեսնել⁴⁸:

Սվազի բերդին նկարագիրը (ըստ ակամատեսներու պատմութեան).

Քաղաքին հիւսիսային կողմի լեռները կը կոչուին Սիր-Նիշան եւ Թուզ Ասար: Այդ բարձր լեռներու լանջին վրայ կը դնուէր քաղաքը:

Թիմուր աւերած է Ստորին բերդը, որ աւելի հարթութեան վրայ կը դնուէր 10-500 քայլ տարածութիւն ունի: Աւերակ բերդին վրայ կայ 1400 թուականով յիշատակարան մը:

Բերդը թէեւ աւերակ է, բայց տակաւին շատ ամրակուռ է. քարուկիրով շինուած, խորասանի քարերով շինուած մեծ բերդ մըն է: Ամէն կողմէն պարիսպներ ունի եւ աշտարակներ: Բայց ինչ ինչ տեղեր քանդուած են: Այս քանդուած բերդը հինգ դարպասներ ունի. բերդի դռնէն սայլերը դիւրութեամբ կրնան ներս մտնել:

Ստորին բերդը առանց այգիներու եւ պարտէզներու է: Բերդը քաղաքին վրայ կը նայի, եւ աւելի բարձր է քան փաշային բերդը. ներսը ունի 200 բերդապահներու բնակարաններ, ճամբի մը եւ մթերանոց, ջուրի աւաղաններ, ռազմամթերանոց եւ 40 փոքր թնդանօթներ: Վէրիները բերդին մէջ կ'ապրին:

Սվազի փաշան Ստորին բերդին մէջ կը բնակի. Ստորին բերդը կը նայի Վերին բերդին. եթէ փաշան ապստամբի, Վերին բերդի թընդանօթներով փաշային բերդը քարուքանդ կ'ընեն:

Փաշային այս բերդը Թիմուրէն քանդուելէ առաջ (568) = 1190, Սուլթան Ալաէտտին Քայսապատ: Երկու յարկանի սրբանորոգեր էր Սուլթան շինուած ամուր բերդ մըն է, ունի չորս խոր խորատաշ քարերով շինուած ամուր բերդ մըն է, ունի չորս խոր խորատաշ քարերով շինուած 20 աշտարակ եւ 600 ատամնաւոր պարէս-րամներ: Ունի ընդամէնը 20 աշտարակ է: Պարիսպներուն բարձրու-պապատ: Շրջագիծը 1500 քայլաչափ է: Պարիսպներուն բարձրու-թիւնը՝ 27 արմկաչափ: Այս բերդը անպարտէզ եւ անայգի է, բայց

48. ՆԱԹԱՆԵԱՆ ՊՈՂՈՍ ՎՐԴ., Տեղագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ, Կ. Պոլիս 1877, էջ 68-70:

ունի 300 հողածածկ տուններ: Փաշային պալատն ալ հոն է: Հին ատեն ասիկա հասարակ դղեակ մըն էր, Միլթիլդա Փաշան հոն բաղմաթիւ սենեակներ, դիւան-խանէ եւ բաղնիք չինել տուած է, եւ դղեակը զարգարած:

Ստորին բերդը՝ Վերին եւ ներքին բերդէն աւելի լաւ շինուած է եւ զարգարուած, քանի որ Փաշան հոն կ'ապրէր. շարաթական հոն չորս ժողով կ'ըլլար եւ շատ մարդ հոն կը հաւաքուէր:

Այս բերդը գտնուելով լեռան լանջին, ունի դրախտանման ջուրեր. սակայն Վերին բերդը ճամբէ դուրս ըլլալով, ոչ ոք հոն կը յաճախէ: Քաղաքի հարուստները իրենց վախէն որ կողոպտուին՝ իրենց թանկագին բոլոր ունեցածները այս Վերին բերդին մէջ կը պահեն, իբրեւ ապահով տեղ:

Սեբաստիա իր երկու բերդերով, ընդամենը ունի 6060 տուն:

Միւլէյման եւ Գարա Եոսուֆ ամիրաները կ'ամրացնեն բերդը եւ զայն պաշտպանողական ուրիշ միջոցներով անառիկ կը դարձնեն: Իսկ սելճուք սուլթան Ալաէտտին Քալբուստ զայն կը նորոգէ հիմնովին, մաքրատաշ քարերով: Աշտարակներու բարձրութիւնը 20 կանգուն է, պատերուն ստորին մասերը՝ 10 եւ վերին մասերը՝ 6 կանգուն:

Բերդը ունի եօթը դուռ. բայց բերդին արեւելեան կողմը փոս չկայ. Թիմուրլէնկ այս կողմէն ականներ բացաւ, թուրքեր չինեց. 8000 ականահատներ ամրութիւններուն ներքեւ փորեցին. եւ որպէսզի հողը չկքի, բացուած ականներուն մէջ ցիցեր դրին, եւ տոկուն տախտակներ: Երբ ականները հարկ եղած խորութեամբ բացուեցան, ականահատները կրակի տուին տախտակները եւ ցիցերը ու հեռացան: Ամրութիւններէն հսկայ մասեր սարսափեցուցիչ աղմուկով փլան:

17 օր ետք՝ աշտարակները սկսան փլչիլ եւ պարիսպին մէջ ճեղքեր բացուեցան: Թիմուրլէնկի զօրքերը սանդուղներ չինեցին եւ աշտարակներէն վեր բարձրացան: Քաղաքին դրաւումը անխուսափելի էր: Խոստացուած զինուորական օգնութիւնը չէր հասած: Փրկութեան միակ միջոցն էր անձնատուր ըլլալ...»⁴⁹:

Էլվիա Չէլէպիի ուղեգրական հաղորդումներէն կ'իմանանք՝ թէ «Երբ Չէլէպի Սուլթան Մուհամմէտը փառելահա կը դառնայ, կը ձեռնարկէ Սվազի նորոգման եւ բարեկարգման: Ան երկու բերդեր կը կառուցանէ»⁵⁰:

49. Այս հատուածին համար հմտ. Ա.Ռ. Ն. ՊԱՏՐԻԿ, մշ. գ. էջ 120-122 եւ 272-273:
50. Հմտ. Ա.Ռ. Ն. ՊԱՏՐԻԿ, մշ. գ. էջ 271:

ՎԵՐՋԱԲԱՆ

Երբ կը վերջացնենք մեր այս համառօտ ուսումնասիրութիւնը Սեբաստիոյ մասին, լուսաբանելով մութ մնացած քանի մը կարեւոր հարցեր, կ'զգրակացնենք:

1. Հայերը շատ հին ժամանակներէ, քաղաքական եւ տնտեսական պատճառներով՝ եկած եւ հաստատուած էին Սեբաստիա եւ իր շրջաններուն մէջ: Սենեքերիմի 1021ի զանգուածային դաշտէն, եւ 1064ին Անիի դրաւումէն ետք, կը կրկնապատկուի Սեբաստիոյ, Կապադովկիոյ եւ Կիլիկիոյ հայ բնակչութեան թիւը, մինչ հիմերը կը դրուին Կիլիկեան հայ իշխանութեան, Նոր Հայաստանի մը:

2. Սենեքերիմ թագաւորը, ոչ թէ Սելճուք Թուրքերու արշաւանքէն վախցած, խաղաղ ապրելու յոյսով կայսեր կը դիմէ «Իբրեւ որդի առ հայր...», եւ ան կ'ընդունի զինքը «լցեալ աստուածային սիրով», ինչպէս կը ներկայացնեն մեր պատմիչները, այլ Վասիլ Բ. բռնակալ կայսեր սպառնալիքին եւ ստիպումին առջեւ՝ Վասպուրականը անոր կը յանձնէ. ապա թէ ոչ՝ կայսեր բանակները պատրաստ էին ոտնակոխ ընելու ամբողջ Վասպուրականը, ինչպէս ըրած էին Վրաց, Տալքի եւ Ապահոնիքի շրջանները: Ասոր ապացոյցն է դիմադրութեան եւ պայքարի այն ոգին, զոր Սենեքերիմի մեկնումէն ետք, անոր սերունդէն հոն մնացող բաղմաթիւ իշխաններ ցոյց տուին՝ շարունակելով պայքարիլ կայսեր դէմ եւ ազատ ապրիլ:

3. Սենեքերիմ ապրեցաւ Սեբաստիա, իբրեւ թագաւոր, եւ իր որդիները եւս շարունակեցին պահել այդ տիրոջը եւ ապրիլ իբրեւ Հայոց թագաւորներ:

4. Սեբաստիա հին ատեն անպարիսպ էր, Ալաէտտին Քալբուստ՝ Իկոնիոյ սուլթանը զայն դրաւելով, 1200ական թուականներուն, կը չինէ անոր պարիսպները, կ'ամրացնէ քաղաքը կրկին ներքնաբերդերով: Կիլիկիոյ թագաւորութեան անկումէն յետոյ, հայ ժողովուրդը կը շարունակէ ապրիլ իր հայրերու հողերուն վրայ, Օսմանեան հովանիին տակ, մինչեւ 1915 թուականը:

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ